

Խոզակ

Պրուսա	քիլոկ . 150,000 .
Սէլանիկ ու շրջակայքը	„ 200,000 .
Լիւքսեմբուրգ	„ 50,000 .
Ռուս	„ 15,000 .
Օմիւռնիա ու շրջակայքը	„ 10,000 .
Լիւքսեմբ	„ 200,000 .
Գումար	քիլոկ . 625,000 .

որ կ'ընէ 480,000 հօխայ . իսկ գինը , քիլոկրամին 17 ֆրանք դնելով , կ'ընէ , 10,625,000 ֆրանք .

Մետաքս .

(Գաղղիոյ ու Բիւննդի նմանութեամբ)

Պրուսա	քիլոկ . 80,000 .
Սէլանիկ	„ 30,000 .
Լիւքսեմբ	„ 90,000 .
Օմիւռնիա	„ 20,000 .
Գումար	քիլոկ . 220,000 .

կամ , քիլոկրամին 75 ֆրանք դնելով , ամբողջը մէկէն 16,500,000 ֆրանք կ'ընէ :

Իսկ խոզակին և մետաքսին գինը մէկ օրէն առած կ'ընէ 27,125,000 ֆրանք . կամ , 135,625,000 դուրուշ : Երասին այս աստիճանի բարձր գին ունենալուն պատճառը Լիւքսեմբուրգի մէջ շատ յարգ ունենալն է . և թէ որ իր սովորական գինը դարձնելու համար աս գումարէն 100ին 25 ալ հանելու ըլլանք , կ'եղէ 20 միլիոն ֆր . որ ըսել է՝ թէ ասկէ տասնը հինգ տարի առաջ եղած շահին վրայ 14-15 միլիոն ֆրանք աւելցած կը գըտնանք :

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հանքերու և Զրհորներու խորոտիւնը :

Հետաքրքրական բան մըն է գիտնալ թէ մինչև հիմա մարդուս ձեռքը երկրագնդին հաստատուն կեղևը որչափ աւելի խորութեամբ կը գտնուի , թէ ջուր և թէ հանքեր հանելու համար :

Ինչպէս որ յայտնի է , քանի որ երկրի խորը թափանցէնք այնչափ ալ բարեխառնութեան աստիճանը կը բար-

ձրանայ . Սալֆերտին՝ կըրնէլի (Ռաբիդու մօտ) արդեսեան ջրհորը փորելու ատեն առած ջերմաչափական չափերովը գտաւ , որ ամէն մէկ 31 մետր խորը երթալուն բարեխառնութիւնը հալիւր աստիճան ջերմաչափին վրայ մէկ կը բարձրանայ : Եւ իսկ կըրնէլի ջրհորը որ 547 մ . խորութիւն ունի , յատկէ գրեթէ 17 ու կէս աստիճան աւելի բարձր բարեխառնութիւն ունի :

Թէ որ այս ջրհորին պեղումը դեռ 250 մ . ալ աւելի առաջ երթալու ըլլար , որով ինչպէս կը կարծուի՝ ջրաբեր խաւին հասնուէր , կըրնէլի ջրհորը կատարեալ ջերմադիւր մը կ'ըլլար ջերմութիւնը տաքութեամբ տալով ջուրը : Սալֆերտինին դրութեամբ , պարզ հաշուով մը կը գտնանք որ 3 քիլոմետր խորութեամբ եռացեալ ջրոյ ջերմութիւնը պիտի գտնանք , իսկ 60 քիլոմետրին հանքաբանական պնդագոյն գոյացութիւններն ալ , ինչպէս են լաւան , պաղաղը , պորփիւրը , դրաքիդը , կրանիդը և այլն , բոլորովին հալած պիտի ըլլան . վասն զի պէտք է որ այս խորութեան ջերմութիւնը 2,000 աստիճանէ պակաս չըլլայ :

Իսկէց կը հետեւի որ երկրագնդին

հաստատուն կեղևը որ զմեզ կը բռնէ 15 փարսախէն աւելի խորութիւն չկրնար ունենալ, և գուցէ շատ աւելի քիչ ալ ըլլայ :

Սարգուս փորած խորութիւնները ծովուն դաշտերուն հետ և ոչ իսկ կըրնան համեմատուիլ. Սվկիանոսի մէջ 8 220 և մինչև 13 643 մ. խորութիւն տեղեր գտեր են, ու դեռ յատակը չեն հասեր: Բայց սակայն մեր հանքերը թէպէտև Եւրոպիոյ լեռներուն բարձրութեամբն ալ չկան նէ, սակայն գէթ աւելնէն բարձր ամբարտակներն ալ կ'անցընեն, ինչպէս են Եգիպտոսի բուրգը՝ որուն բարձրութիւնը 146 մ. է, ու Սդրազպուրկի մայր եկեղեցին՝ որ 142 մ. բարձր է:

Ինգլիոյ ամենէն հուշակաւոր ձեռագործերն են Բերահամի ջրհորները որ ասկէ քսան տարի առաջ 442 մեդրէն աւելի բարձր կ'ըլլային. Տօթօթի աղան, որուն խորութիւնն է 429մ. 80. Երէժէվինի պղնձի հանքը ծովուն երեսէն 518 մ. խոր է. իսկ հողուն երեսէն 642 մ.: Արի ըսած համեմատութեամբս պէտք է որ այս պղնձահանքիս ամենէն ցած սրահներուն մէջ բանուորները տարին տասուերկու ամիս 20 աստիճան ջերմութիւն ունենան:

Բայց հանքերուն մէջ քան զամենը աւելի խորագոյնը Վուդգեմպերկի (Պոհեմիոյ մէջ) Եգէլախգ հանքն է, որ հիմա անմատոյց է. ասոր խորութիւնը 1151մ. 30 էր, որ է ըսել Սեսուվ լեռնէն գրեթէ 45 մեդր միայն պակաս. ու Սդրազպուրկի զանգակատնէն ու Վեոքսի բուրգէն ութը անգամ աւելի

Կ-Պոլիս . . .	33	անգամ շարժ եղաւ .
Պրուսա . . .	25	—
Սելանիկ . . .	5	—
Զմիւռնիա . . .	4	—
Հուդոս . . .	2	—
Կէլպոլու . . .	2	—
Էսիրնէ . . .	2	—
Մաքրի . . .	1	—

Իսոնց մէջ առանձին յիշատակենք Սոստանդուպոլիս ու Պրուսա :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ : Իսինք թէ անցեալ տարին միայն 33 շարժ ունեցաւ

խոր : Իր մեծագոյն խորութիւնը միշտ 37° ջերմութեան մէջ էր. որով և անտանելի :

Սինտէնի աղահանքներուն (Իրուսիոյ մէջ) խորութիւնը 680 մ. է. որ եթէ ծովու երեսէն առնենք 607մ. 50 կ'ընէ : — Եոաքիմիդալի ճոխ հանքը (Պոհեմիոյ մէջ) թէպէտ 646մ. 15 խոր է, բայց դեռ ծովու հարթութեանը հասած չէ : — Սիսիլիոյ Կուանախտութիւն մօտ Սալենսիանա հանքը 513մ. 88 խորութիւն ունի, բայց իր յատակը դեռ ծովուն երեսէն 1817մ. 55 բարձր է. Իստի մէջ շատ աւելի բարձր հանքեր կը գտնուին. — Էնօ-էնօ-չինկի հրաշքի-ը ըսուած հանքը (Էստոնիոյ մէջ) 974 մ. խորութիւն ունի. բայց թէ ծովուն երեսին հետ ինչ համեմատութիւն ունի՝ դեռ իմացած չենք :

Տաճկաստանի 1855 տարուանը մէջ երկրաշարժներ :

Ինցեալ տարին Տաճկաստանի տարեգրութեանը մէջ տխուր յիշատակներ թողուց : Պատերազմին հարուածէն ի զատ ուրիշ հարուած մ'ալ, այնչափ աւելի ահաւոր որչափ որ անխուսափելի, բոլոր երկիրը ահու գողի ու սղոյ մէջ ընկղմեց : Իսայն Հուդոսի ու Փիլիպպոլպոլիսի մէջ (Հունուարի 24էն մինչև Գետեմբերի 16^e տասներհինգ տեղ աս ահաւոր սասանութեանց տեսարանն եղան : Հոս դնենք շարժին տեղերը իրենց թուոյն կարգաւ :

Բաքլա աղաք . . .	1	անգամ շարժ եղաւ .
Սամուս . . .	1	—
Մեթիլինէ . . .	1	—
Նազէլա . . .	1	—
Տարտանէլի . . .	1	—
Լիւլէ-պուրղազ . . .	1	—
Փիլիպպոլպոլիս . . .	1	—

Պոլիս, որ մեծ և որ փոքր, իսկ ուրիշ տարիներ ալ թէպէտև շարժը պակաս եղած չէ, բայց ոչ թէ այսչափ խիտ ու շատ. անանկ որ բոլոր ետքի 14 տա-